№ 6 (86) VIII ՏԱՐԻ 30 ՅՈՒՆԻՍ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

—

Ոչ Եմէնի հզօր ապստամբութիւնը, որի ճնշման համար Կ. Պոլսի կառավարութիւնը տասնեակ հազարաւոր զօրքեր ուղարկեց, ոչ Ալբանիայի արիւնոտ անցքերը, որոնք մի անգամ էլ ցնցեցին դիւանագէտներին և խոշոր հոգսեր են պատճառում Աբդիւլ Համիդին — ոչ մէկը դրանցից այնչափ ուժեղ կերպով չի շղթայում մեր միտքը, որչափ մի այլ բան, որ աւելի ուշագրաւ է մեզ համար։ Մեր խօսքը սպիտակ տէռօրի մասին է, որ սուլթանը այնքա՛ն կատաղութեամբ հրատարակել է վերջերս հայութեան դէմ, հայ յեղափոխութեան դէմ։

Երկիւղն ու անորոշութիւնը նորից պաշարել են սուլթանների մայրաքաղաքը։ Յուզմունք, աճապարանք, արտասովոր ջղային դրութիւն է կառավարչական շրջաններում։ Ոստիկանութիւնը մի տենդային եռանդ է ծաւալել, լրտեսները խժում են մայրաքաղաքի և այլ տեղերի անկիւններում ու հրապարակներում. „հայկական մօտալուտ ապստամբութիւնը" կանխելու, կամ խեղդելու ջանքեր են թափում։ Ըլդըզ Քէօսկը „որսալու" հրահանգներ է տալիս. հայ կօմիտէների դաւադրութիւնները նրան աւելի սարսափելի են, քան Եմէնն ու Մօնտենեգրօն։ Ահա մեզ համար ուշագրաւ փաստը։ Վերջին շարժումները համոզել են սուլթանին, որ հայ յեղափոխութիւնը կատակ չի անում, և ահա աջ ձեռքով՝ օսմանեան վեհապետը ճգնում է սիրաշահել կօմիտէներին, հայկական հաւատարմութիւնը որսալ (*), ձախ ձեռքով՝ անտագօնիզմ է սերմանում մահմեդականների ու քրիստոնեաների միջև և որսական շների վոհմակներն է արձակում հայ խաղաղ ազգաբնակութեան վրայ։ Ձերբակալում են ամենաչնչին պատրւակներով ու բանտերն են նետում հայ անուն կրողներին, լինին նրանք յեղափոխական, թէ սուլթանական։ Այդ անողորմ ու վայրենի մարդորսութեան մէջ Համիդի ծառաները եռանդագին մրցում են իրար հետ։ Ուր ոչինչ չկայ, հնարում են մի բան, գտնում են երևակայական կօմիտաջիներ, զէնքի պահեստներ, ռումբերի թագստոցներ։ Իւրաքանչիւրը կրկնապատկում է իր կորովը միւսներին գերազանցելու և „տիրօջ" ողորմածութիւնը աւելի մեծ չափերով վայելելու համար։

Տէռօր է Տաճկաստանում։

Նա այնտեղ մշտնջենաւոր է, երբէք դադար չունի. միայն երբեմնապէս նա դուրս է վիժում աւելի ներոյժ ու ցասկոտ կերպով։ Այն օրը, երբ հայի բերնից լսեց ազատութեան առաջին թոթովանքը, երբ առաջին անգամ Տաճկահայաստանի հողը սրսկւեց հայ ազիտատօրի արիւնով, այն օրը և սուլթանը հնչեցրեց տէռօրի փողը։ Բանտեր ու աքսորավայրեր լցւեցին կենդանի նահատակներով։ Այնուհետև „հայորսութիւնը" քրօնիկական դարձաւ։

Սուլթանների փիլիսոփայութիւնը ի սկզբանէ երկու ճանապարհ ընտրեց ապստամբ ոգին խեղդելու համար։ Մինը՝ արմատական բնաջնջում, որպիսին նա հեղինակեց — առանց յաղթանակի պսակներ վայելելու — Յունաստանում, Բօլգարիայում, Կրէտէյում և Հայաստանում։ Դա արիւնագոյն տէռօրն է։ Միւս ճանապարհը աւելի խաղաղ է և աւելի մակեավէլական. բանտերի խաւարում և աքսորների անյայտութեան մէջ փթեցնել կալանաւորներին, ոստիկանական հալածանքների ենթարկել ժողովրդային ընդհանրութիւնը, մանաւանդ նրա մտածող, իմացական մասը, — դա սպիտակ տէռօրն է, ոչ պակաս ահաւոր, քան առաջինը։ Այդտեղ բռնաւորը վախենալու բան չունի, ազատ է, ինչպէս իր հարեմում, այդտեղ նրա դէմ պլատօնական բողոքներ անգամ չեն բարձրանում...

Հայ յեղափոխականի ստւերը միայն մշտապէս հետեւում է և զարզանդ է ազդում „քաջասիրտ" դեսպոտին։ Սուր սլաքները նրա դէմ են ուղղւած և նա չի նիրհում. յեղափոխական անմատչելի դիրքից ինքնաբաւականութեամբ դիտում է նա իր ազդած սարսափի մեծութիւնը և իր վեհերոտ ախոյեանի ամեն մի շարժւածքը։ Նա տեսնում է, որ իր տարիների գործունէութիւնը տւել է մասամբ ցանկալի արդիւնքը, որ հայկական յեղափոխութիւնը ոյժ է դիտւում, մի ոյժ, որ ընդունակ է ահաբեկել Թիւրք կառավարութեան։ Թշնամին զգում է այդ ոյժի ներկայութիւնը, նրա ամենուրեք լինելը, նախատեսնում է նրա „մօտալուտ թափերը", որոնք իր համար եղերական կարող են լինել։ Այդ է պատճառը, որ նա սպիտակ տէռօր է ծաւալել առանց այն էլ ամայացած երկրի վրայ և խելակորոյս

հալածում է հայ զաւակներին։

Խե՜ղճ տրամաբանութիւն, որ այդ ճանապարհով է ուզում յաղթանակը տանել։ Բռնակալների միտքն ու յիշողութիւնը չափազանց կարճ է։ Երբ յեղափոխութեան միկրօբները փոխանակ ջնջելու՝ կը սերուին, կը բազմանան ու բանտերից դուրս կը տարածուին, այն ժամանակ թշնամին իր կրկնակի մնանկութիւնը կողբայ։ Ով կոյր չէ, տեսնում է, թէ ով է յեղափոխական գաղափարին մնունդ տուողը։ Որ թիւրք կառավարութիւնը ինքն է զօռով յեղափոխականացնում հայ խաղաղ քաղաքացիներին, որ սուլթան Համիդը տարիներից ի վեր հայ յեղափոխութեան ագիտատօրն է եղել՝ անուղղակի կերպով, — դա մեզ համար վաղուց իրողութիւն է։ Եւ եթէ այդ իրողութիւնը մի անգամ արմատանար մեր ժողովրդի գիտակցութեան մէջ, նրա խաւերից հանդէս չէին գալ խոտակեր արարածներ, ու չէին հռչակել, թէ հայկական կոմիտէն է արհեստական գռգռումների հեղինակը և առանց նրան՝ խաղաղութիւնը կը թագաւորէր... Դերագոյն ժամանակն է այսօր՝ վերջ դնելու այդ անհեթեթ զառանցանքներին, միանգամ ընդմիշտ որոշելու թշնամիներին ու բարեկամներին. ժամանակն է վերջապէս ըմբռնելու, թէ որտեղից է բղխում չարութեան յարատև ջամին, թէ ինչ դեր են խաղում սուլթանի գործակալները և հայկական կոմիտէները։ Ապա թէ ոչ՝ շարունակ գլուխը ծեծել, սև օրը սգալ և յաճախ յեղափոխականներին էլ անիծել, փոխանակ թեթևացնելու նրանց մէջքին ծանրացած ահռելի բեռը, փոխանակ նեցուկ լինելու նրանց անխուսափելի կուի մէջ, — դաւաճանութիւն չէ՞...

Աշխարհաղղորդ սարսափներն անգամ, կարծէք, ոչինչ չսովորեցրին այդ ժողովրդին, ոչ մի հետք չթողին նրա հոգեկան աշխարհի վրայ. միայն ծովածաւալ վիշտ ու տառապանք... Արհաւիրքներից մազապուրծ ազատուած՝ նրա մի մասը տարագիր եղաւ, իր ողբերով, հառաչանքներով սար ու ձոր թնդացրեց։ Կարճ ժամանակի փորձը համոզեց նրան, որ նոյն իսկ ցեղակից եղբայրների օգնութիւնն էլ շատ չնչին բան է, և որ մնում է դարձեալ սեփական քրտինքով իր հացը վաստակել։ Այսօր նա դիմում է կրկին դէպի հայրենիք... Բայց հայրենիքը — մի լայնատարած աւերակադաշտ, մի գերեզմանատուն։ Նա կը տեսնէ այնտեղ այն ողբերգական „խաղաղութիւնը“, որը, ո՞վ գիտէ, ինչ զարհուրելի անակնկալներ է յղանում։ Եւ նոյն թունաւորուած կեանքն ու աշխատանքը... Նա գիտէ այդ։ Գիտէ, որ հայրենական օճախը հազիւ շէն արած՝ քիւրդն ու զապտիան գաղանային ախորժակներով վրան պիտի վազեն։ Մտածո՞ւմ է արդեօք պաշտպանուել, թէ՞ ըստ առաջնոյն, անբան ոչխարի պէս թոյլ տալ, որ մորթեն. մտածո՞ւմ է արդեօք ընդհանրապէս դիմադրութեան որ և է միջոցի մասին։

Բայց այնտեղ առաջ կը գան նորից իր բազմաթիւ խորիմաստ քարոզիչները, ժողովրդի հռչակաւոր „փաստաբանները“։ Հայ կղերը կ՚որոտայ կոնդակներով ու եկեղեցու բեմից՝ խոնարհութիւն, հնազանդութիւն, յանուն Քրիստոսի ու Աստուծոյ։ Յանուն այն Աստուծոյ, որը իր գթութեան երբէք չ՚արժանացրեց մեզ... Հայ մեծապատիւ աղաները արձագանք կը տան կղերին, հնազանդութիւն կը քարոզեն նոյնպէս. և բոլորը միասին կը շանթահարեն, կը յորդորեն ժողովրդին՝ հեռու փախչել „ազգակործան ու շահախնդիր“, յեղափոխական կոմիտէներից... Խե՜ղճ ժողովուրդ։

Հերիք է ստրկանալ կրօնական ու աշխարհական բռնութիւնների առաջ, հերիք է ոչխարային հնազանդութեամբ կրել և սուլթանական ողորմած հարուածները և կղերական անսիրտ քարոզները յանուն բարութեան ու երախտագիտութեան դէպի թշնամին, դէպի այն թշնամին, որ միմիայն թալանելու ու մորթելու իրաւունքն է ճանաչում։ Այնտեղ, ուր քրդական-սուլթանական խարազանն է իշխում, ուր մարդը բորենի է իր նմանի դիմաց, այնտեղ ճնշածներին և անզէններին քրիստոնէական խոնարհութիւն քարոզելը դաւաճանութիւն է, ոճիր։ Թողէք նեաստացուցիչ և ազգադաւ պատգամները, տոգորուեցէք Հին Կտակարանի այն հրահանգներով, որոնք թունալից բողբ են ցայտում ամեն բռնութեան դէմ և միանգամայն յայտարարում են՝ „Ակն ընդ ական“։ Ահա՛ փրկարար, ազատաշունչ սկզբունքը։ „Ակն ընդ ական“ թիւրք կառավարութեան և բոլոր բարբարոս ու յափշտակիչ տարրերի նկատմամբ։

Մովսէսի այդ օրէնքը միահեծան թագաւորել է նախապատմական բոլոր մարդկային ցեղերի մէջ, իբրև մի օրգանական երևոյթ, որ մարդկութիւնը ժառանգել է անասնութիւնից։ Քիւրդը, լազը, բաշիբոզուկը, դժբաղդաբար, հեռու չեն գնացել նախապատմական ցեղերի վիճակից։ Քրդերի մէջ միայն, իրաւ է, տեղ-տեղ երևան են գալիս այսօր համակրելի նշաններ, նրանց մի մասը սկսում է գիտակցել — բաղձանք, որ այդ գիտակցութիւնը հանրային դառնայ — մեր շարժման օրինաւորութիւնը և մեզ հետ համերաշխ ընթանալու անհրաժեշտութիւնը։ Ընթերցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում ներկայ համարի մէջ զետեղուած մեր բարեկամ մի քիւրդ բժշկի նամակի վրայ։ Քրդերի, լազերի, չերքէզների այն ցեղերի դէմ, որոնք միացած տաճիկ կառավարութեան հետ՝ ամեն կողմից արիւնահեղ պատերազմ են յայտարարել իրենց միջավայրում ապրող մի կուլտուրական ժողովրդի — այդ արիւնռուշտ ցեղերի դէմ վերջինիս համար միակ տրամաբանական և անխուսափելի զէնքն է՝ Մովսիսական օրէնքը։ Երբ Խանասորի դաշտում քրդերը լեղապատառ, զարզանդած, „եամա՞ն ֆէդայիները եկա՞ն“ գոչելով, փախչում էին հայկական բանակի առաջ, և երբ Շարաֆ աղայի ամբողջ ցեղը ջնջելով՝ սարսափը տիրեց Վասպուրականի

քրդերին, — ահա՛ այն ժամանակ, այն գերագոյն վայրկեանին մանաւանդ, զգաց վասպուրականցի հայը, թէ որչա՞փ հզօր ու պաշտելի է Գնդակ-Աստուածը։ Իսկ քիւրդը ոչ միայն սարսափեց „Ֆլահ"-ից, այլ և յարգեց նրան...

ՔԻՒՐՏԼԵՐԷ ԽԻԹԱՊ

(ՔԻՒՐԴ ԲԱՐԵԿԱՄԷ ՄԸ)

—

Կէլօ քիւրմանճա վագդ վագտէ զանինէ, վագդէ ճամէրիա չու։ Իրու խալքէ ալէմի հէմու տիւխիւյնին. սապահ խանտընէ զանին տիւնեէտա չի տըպէ չի նապէ տիսհա սապահ խանտընէ հէք էհու տիսթիյնին սէրպէսթ տըպին միլլէթքի նախիւնէ։ Ղիւլամէ ալէմա տպէ, իրօ, հուն ուլամէ հիւքիւմէթին, հիւքիւմէթ փէրէ եվէ տիսթիյնէ հուն տիշուղուլինին սրպէ հաեա էվարէ տիսթիյնին տիւզօլդէ նըսֆ ավի տիտին խալքէ հիւքիւմէթէ, ավ փէրէքի հուն տիտին հիւքիւմէթէ հիւքիւմէթ տիտէ զաբթիէրա մէմուրրա ժիպօյէ մաաշ, ավ զաբթիէ ավ մէմուր քի հէրրօ եվէ զուլումտիքէ մալեվէ տիսթիյնէ ժին եվէ խուշքեավէ խիզավէ տէսթ տրագի տիքէ հուն նիքեարն տէնք պիքին։ Զիմա տէնք նաքին մէրիւյի հիւքիւմէթէ լօմա։ Ճար քի աքլ էյուխէ պէրէվ պիքին պըաքլինին քի էվ քիւչիքա։ Ղուլամ եվէէ ժպօյէ մաաշէ փէրէ հուն տիտին։ Ժպօյէ ավ տետին քի, եվէ հֆզ պիքէ քի եվէ հֆզ քիր ճարճարիա բօմի թէն մալեվէ թալան տիքին եվէ լէտիխինին հուն չիմա հիւքիւմէթրա նա փրսին քի սապա չիէ մէմուրա ժըմէ զիւլիւմտիքին չի՞մա տավա նաքին էզ գանըն հունտը պէժին քի քէրա տավա պիքին էմ տէրրին տէրիյէ հիւքիւմէթէ եէքճարթալան տպէն հիւքիւմէթ կէօնատէ հիւքիւմէթ կէօնատէ հուն չի՞մա հիւքիւմէթրա փէրէտէտին կէլօ քիւրմանճա մէրույա պէրէվ պիքին պիչին գօնաղի հիւքիւմէթէ փէրէ եվէ չի՞ տըպէ պի փրսին հիւքիւմէթ մէճպուրա կեալկեալ եվէ կեօպըդէ էկէր կեօնատէ սիլահ եվէ պսդինին իսեան պիքին զալիմա պիւքիւժին հիւքիւմէթրա պիպէժին քի էմ մէրուվին ժիմէրա մէրվի մուամէլէ պիքէ. թիւնիքեարի էմքեարն հիւքիւմէթէք պաշ էէքին հիւքիւմէթ եվէ ժիմարա լազըմ մնէ, Սպտիւլ Համիտ նէ խալիֆ է, նէ փատիշահ է եէք մէրքիւշ է ավ մէրքիւշ ժըվէրա տըպէժէ քի էրմէնիա պիւքիւժին հուն չիմա նապէժին քի, էմ նիքեարն ճիրան էմէ պիւքիւժին. էրմէնիա պի փրսին քի հիւն չիմա բատըպին ավանա ժվէրա տըպէժին քի բապուն էմէ սէպա զուլմէ էրմէնիա սէպա զուլմա բատըպին խուն էյուխա տրիժինին հուն չի մատիսէքինին էյէր խուն ժի պէրամպէրի էրմէնիա բապըն հիւքիւմէթ նիքեար է ժվէ թշքի պիքէ. խալքի ուժում օսմանլըյա ժպօ եվէ էսարէթէ խէլաս պպին. էզ ճի միւսլիմանմ ժվէրա բաստ տպէժիմ էզ բասդի հաղ տիքիմ ժվէրա տպէժիմ քի հիւքիւմէթէ մէ տիւժմինի մալու ճան եմէէ։ Հէմին բապըն չի՞ տիսէքինին սիլահիւ ճէպիանէ պիկիրին, իրօ, նէ՞ պահսէ տին ու միլլէթէ. իրօ, պահսէ ինսանյէթէ։ Էրմէնիա պպժին քի վարըն էմպէրամպէրին ավօ հուն պիպինին քի հիւքիւմէթ ճամէրի եվէ նիքեարէ պաշ պիքէ. ավէ պրէվէ։ Վէ չարէ տիւնեա չէտպէ հուն էրմէնիա պէրամպէր պպին տիւժմնի վէլաթ եվէ քի մօսկօֆէ նքարէ ժիվէ խարապի պիքէ։ Էրմէնիա տօսթ եվէէ հուն տու հէզար սալէ պէրամպէր էվան բուինին, էրմէնիա ճիրան եվէէ մէրբուլի ճամէր ճիրանի խուրա տիւժմին նապէ։ Էյէր հուն տէսդի հիւքիւմէթէ վէ զուլմէ խալաս պպին կէլը մէքթէպա հիւնքեարն չէյքին զարու եվէ պիտին խանտին վէ չաղէ զարու եվէ կէլը բաստիա խապէրտար պվէ քիւրմանճիա ավքաս սալէ հիւքիւմէթա սալեան քամջուր տիտէ հիւքիւմէթ ժվէրա քէ տէրի մէքթէպ չէյքիր։ Էզզանըն թիշքի չէ նէքիռիյէ ավ նէ հիւքիւմէթէ մէրուլի տիպէ. մէրուլի ճամէր նիքեարէ վլամէ տզա պիքէ չարէյի խէլաս եվէ եէքէ տէսդ եվէ սիլահ ըսեանէ։

Տր. Ս.

* * *

ԿՈՉ

ՔԻՒՐԴԵՐՈՒՆ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ)

—

Է՜յ քիւրդեր, գիտուութեան դար է այս դարը. լեռ, ներուն մէջ իկիտուութեան ժամանակը անցած է. այսօր բոլոր ազգերը դպրոցներուն մէջ կը սորվին. ուսման շնորհիւ է որ իրենց իրաւունքն ու ազատութիւնը բռնաւորներուն ձեռքէն կը խլեն։ Տգէտ մնացած ազգերը գերի կը լլան։ Ահաւասիկ դուք ալ տըգէտ մնացած ըլլալնուդ տիրող կառավարութեան գերին եղած էք։ Առտնէ մինչև իրիկուն կը բանիք կը դատիք՝ 60 փարայ է շահածնիդ, որուն կէսը ստիպուած էք կառավարութիան տալ։ Ձեր աշխատութենէն օգուտ քաղող կառավարութիւնը այդ դրամով ձեր վրայ կը ղրկէ կարգ մը զափթիէներ, ցած պաշտօնեաներ՝ որոնք թէ ձեր դրամը կառնեն և թէ ձեր աղջիկներուն ու կիներուն պատիւը կը լլկեն։ Ինչո՞ւ ձայն չէք հաներ, անոր համար որ կառավարական մարդիկ են։ Անգամ մը խելքերիդ գլուխնիդ ժողվեցէք... Դուք էք այդ կառավարական մարդ անունը կրող շները ապրեցնողը. անոնք ձեր ծառաներն են, դուք դրամ՝ կուտաք, կառավարութիւնը պարտաւոր է ձեզ պաշտպանելու. չէ թէ աւերելու։ Ինչո՞ւ օր մը տեղ մը չէք խմբւիր և կառավարական շէնքերը չէք կոխեր, ինչո՞ւ անոնց երեսին չէք ըսեր „մենք չարչարանքով վաստկած դրամնիս բռնութիւն ընելու համար չենք տար ձեզի, հապա հանգիսս ապրելու համար"։ Բայց պիտի ըսէք թէ կառավարութիւնը ականջ չի դներ մեր ըսածին. եթէ մտիկ չընէ ըսէք կառավարութեան թէ „մենք մարդ ենք և կուզենք որ մեզի հետ իբրև մարդ վարուիք. ապա թէ ոչ ուրիշ կառավարութիւն մը կազմել հեշտ է, քանի որ մենք ձեզի պէտք չունինք դուք ալ մեզի պէտք չունիք։

Սուլթան Համիտ ոչ խալիֆայ է, ոչ փատիշահ։ Ձեզ, ձեր հայրենակից հայերուն դէմ կը զրդռէ. դուք ինչո՞ւ չէք ըսեր որ անոնք մեր թ ո փ ր ա գ-գ ա ր տ ա շ ն ե ր ը (հողեղբայր) են, մեր դրացիներն են և միևնոյն երկրին զաւակներն ենք։ Անգամ մը ձեր ֆարևան հա-

յերուն հարցուցէք թէ ի՞նչ է իրենց նպատակը. ինչո՞ւ կապտամբին — անոնք պիտի պատասխանեն — քաշած հարստահարութիւններնէս ազատելու համար արիւններս կը թափենք։ Հայերուն այս վարմունքը որքան գովելի այնքան ձեր կառավարութեան նկատմամբ բռնած անհոգ ընթացքը հակամարդկային է։ Այսօր կրօն, ազգութիւն զատելու ատենը չէ. մարդկայնութեան դարն է այսօր։ Դուք ըսէք հայերուն „եկէք, մենք ալ ձեզի հետ ենք“; Եթէ երկուքնիդ մէկ ըլլաք կառավարութիւնը ձեր դէմ չի կրնար ելլել ան կը յաղթի ու դուք հանգիստ կընէք։ Ան ատեն բուն ձեր թշնամին եղող ռուսիան իսկ ձեր երկիրը չի կրնար անցնիլ եթէ միանաք։

Երկու հազար տարի է հայերուն հետ մէկտեղ կապրիք, անոնք ձեր բարեկամներն ու դրացիներն են։ Աշխարհի մէջ չէ տեսնուած մեծհոգի մէկը որ իր դրացին թշնամի ըլլայ։ Ես — այս տողերը գրողը — մահմետական մըն եմ, բայց շիտակութիւնը կը սիրեմ, և ձեզի շիտակը կը զրուցեմ։ Այսքան ժամանակ կառավարութեան տուրք տուիք ձեզի դպրոց մը անգամ չշինեց, ուրեմն կառավարութիւնը այդ դրամը նպատակին չը ծախսելով աւազակ մըն է։ Աւազակին օգնել ու պատուաւոր մարդոց չօգնել վեհանձն մարդու գործ չէ։

Միացէք, ձեր միակ փրկութիւնը զէնքի ուժով միայն պիտի ըլլայ. այսինքն ապստամբութիւնով։

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԷՆ

16 մայիս 98

Անընդհատ խուզարկութիւններով մեզի հանգիստ չեն տար։

Տեղական կոմիսէրին սպանութենէն կէս ամիս ետքը, տասնհինգ քաղաքական հայ բանտարկեալները բանտը ծակելով փախան. ատոնց կէսը արդէն 3-10 տարուան բանտարգելութեան դատապարտուած էին։ Ասոր վրայ խստութիւններին ու ձերբակալութիւններն աւելի սաստկացան ու շատցան որոնք մինչև հիմա կը շարունակին։ Բանտարկուողներուն թիւը եօթանասունը անց է. և ետևէ ետևէ ալ նորեր կը հասնին։ Կոմիսէրի սպանութեան վրայ քանի մը կիներ ալ ձերբակալուած էին որոնց մէկը, սարսափելի տանջանքներ տալէ ետքը, տաղեր էին։ Կինը, անմեղ կին մըն է, և ահռելի տանջանքներէն ազատելու համար իսկ չկրցաւ սուտ մը հնարել։ Այսպէս են թրքական արդարութիւններն ու պաշտօնեաները։ Սուլթանին աչքը մտնելու համար, ամեն լրբութիւն, անամօթութիւն, ստութիւն յանձն կառնեն։ Ինչե՞ր կը կատարին գաւառներուն խորերը, աստուած միայն գիտէ։ Ասանկ չխպնող, ամօթը կերած կառավարութիւն չէ տեսնուած։ Ամուս 1-ին նմանապէս մեր կողմերի գեղերէն մէկը զարհուրելի եղեռնագործութեան մը տեսարանը կը ներկայացնէր։ Քաղաքէս երեք ժամ հեռու Սագ հայաբնակ գիւղին մէջ գիշերով դրացի քիւրդերը երկու հայ տներու վրայ յարձակելով լաւ մը կողոպտելէն ետքը, բոլոր տնեցիներն ալ կը մորթեն։ Այս չլսուած չտեսնուած բարբարոսութեան զոհ գացին 11 հոգի, չորսը տղամարդ, մնացածը կիներ ու երախաներ։ Երկու տնէն ազատուած էին միայն դեռ լեզու չելած երեք մանկիկներ։ Այս դժոխային ոճիրը սոսկալի տպաւորութիւն գործեց գաւառին հայ ժողովրդին վրայ. կառավարութիւնը մինչև օրս ոչ մի միջոց ձեռք առած է քրդերու վերաբերմամբ։

Այս դէպքէն հազիւ քանի մը օր անցած էր, ահուրիշ հայաբնակ գիւղի մը մէջ քիւրդերու ձեռքով սպաննուեցան երկու հայ գիւղացիներ. մի քանի գիւղերէն արդէն մեծաքանակ թալան տարեր են։

Օրը օրին կրսպասենք նոր աւերումների և մինչև անգամ կարելի է ըսել կոտորածի։

ՆԱՄԱԿ ՊԱՂՏԱՏԷՆ

28 յունիս 98

Կըտիֆի արաբական հզօր ցեղապետը Ճասըմ էլ Սանի, քանի մը ամիս առաջ թրքական կառավարութեան դէմ ապստամբութեան դրօշակը պարզած ըլլալով, վեցերորդ զօրաբանակի սպայակոյտի պետ Մուհսին փաշայի հրամանատարութեան տակ, ապստամբութիւնը զսպելու համար, թնդանօթաձիգ և հետևակ ութ զօրագնդեր ուղարկուեցան։ Այն ատեն Շէյխ Ճանըմ, Պասրայի մէկ քանի ազդեցիկ կրօնական պետերու միջամտութիւնով հաշտութիւն առաջարկած էր, որով օսմանեան զօրքը բանակցութիւններու արդիւնքին սպասելու համար, Պասրա մնացած էր։ Քիչ վերջը յայտնի եղաւ որ խորամանկ ցեղապետի դիտաւորութիւնը ժամանակ շահիլ է եղեր իր զօրութիւնը կազմակերպելու համար. այժմ որ այդ գործը յաջողած է, Եէմէնի ապստամբներու օրինակէն խրախուսուած, վերստին ապստամբութեան դիմած է. այդ միջոցին մէջ միայն գտնելով իր ցեղի վերջնական փրկութիւնը վայրագ խալիֆաներու ձեռքէն...

Շէյխը հրամանին ներքև ունի մօտ քառասուն հազար զինավարժ կուռղներ, որոնց բոլորն ալ արագաձիգ հրացաններով զինուած են։

Թիւրք կառավարութիւնը անցեալի փորձերէն բերանը լեղի համ մնացած, համոզուած ըլլալով նաև իր զինուորներու անկարողութեան մասին, անապատի այդ խիզախ ու անզուսպ զաւակներուն հանդէպ, կը ջանայ ուրիշ արաբ շէյխ մը գրգռել Ճասըմ էլ Սանիի դէմ։

Մօտալուտ մեծ շփոթութիւններու նախանշանները կերևին ասոնք։

ՏՐԱՊԻԶՕՆԷՆ

11 յունիս 98

Տրապիզօնի հայ գիւղի մը մէջ տաճիկ աւազակները երկու տուն կողոպտեցին և երկու կիներ ալ առևանգեցին, որոնց մէկը ծանրապէս հիւանդ է. կառավարութիւնը պէտք եղած միջոցները ձեռք չէ առած. միայն մի ուտիւրը սա յաւիտենական խրատը տուած է հայերուն. „Ես ձեր ամէնմէկու դռան առջև չեմ կարող

ոստիկան կանգնեցնել. դուք ալ մարդ էք, գոնէ հին ձևի հրացան առէք ու պաշտպանուեցէք“։

Ինքնապաշտպանութիւնը... թող ամէն մարդ իր ականջին օղ ընէ բարի միտիւրին խրատը։

Թող չըսեն մեզի հայ վայ։

ԵՄԵՆԻ ԵՒ ԱԼԲԱՆԻԱՅԻ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Խաղաղութիւնը ցնորք է տաճկական երկնքի տակ։ Օսմանեան կիսալուսինը, կարծէք, հաստատուել է այնտեղ միմիայն ականատես լինելու ներքին անդադրում փոթորիկների ու արիւնհեղութիւնների, — երբէք խաղաղութեան։

Այսօր Կրէտէ, վաղը Հայաստան, միւս օրը Եմեն, Ալբանիա, ապա դարձեալ Հայաստան, դարձեալ Կրէտէ... շարունակական անարխիական դրութիւն։ Ամէն մէկը այդ երկրներից մի կենտրոնախոյս ուժ է, որ ձգտում է պատուել, անջատուել։ Բայց կենտրոնաձիգ հակառակ ուժը, որքան և թոյլ՝ դեռ կարողանում է սանձահարել նրանց. վաղը այլևս չի կարողանայ, — և կը շարունակի Օսմանեան կայսրութեան բաժան-բաժան լինելու պրոցէսը։

Առաջին անգամը չէ, որ հեստ արաբները գլուխ են բարձրացնում։ Առաջին անգամը չէ նաև, որ Ալբանիան խժդժութիւնների ու արեան թատր է ներկայացնում։ Երկուսն էլ իրենց դատը ունին, իրենց անկախութեան տենչանքները։ Վերջին անցքերը Թիւրք-Մօնտենեգրական սահմանագլխում, իրաւ է, գլխաւորապէս, ցեղական վրէժխնդրութեան արտայայտութիւն էին։ Բայց քիչ չէ պատահել, որ Ալբանիան ապստամբել է Թիւրք կառավարութեան դէմ. այդ վերջինը սովորել է շատ զգոյշ վարուել ալբանացիների հետ։ Պօլսից „խաղաղացնելու“ առաքելութեամբ ուղարկուած յանձնաժողովին խստիւ արգելուած է „ձեռք տալ“ ալբանացիներին։

Դէպքը պատմենք համառօտակի։ Բերանայի շրջանում ալբանական գինուած խմբեր յարձակւում են քրիստոնեաների վրայ, հրդեհում են հարիւրաւոր տներ, կոտորում են մօտ 80 հոգի։ Այդ վայրենութիւնները կատարւում են Թիւրք ոստիկանութեան աչքերի առաջ։ Ամբողջ գաւառի վրայ այնպիսի սարսափ է տարածւում, որ քրիստոնեաները շտապում են խումբ-խումբ գաղթել։ Նու այստեղ էլ, ինչպէս Կրէտէի յեղափոխութեան դէպքում, հալածուածները ապաստան են գտնում իրենց ցեղակիցների երկրում՝ Մօնտենեգրօ։ Մօտ 10,000 քրիստոնեաներ անցնում են սահմանը։ Հարազատ եղբայրների կրած տանջանքները սաստիկ յուզում են Մօնտենեգրոյի քաջ զաւակներին։ Նիկօլա իշխանը հրամայում է անմիջապէս զօրքերով գրաւել սահմանագլուխը և գնդակների ուժով յետ մղել ալբանացիներին, եթէ սրանք շարունակեն իրենց արշաւանքը։

Սուլթանը, ասում են, գլուխը կորցրել էր։ Այդպէս լինում է ամէն անգամ, երբ լուր է առնում որ և է շարժման մասին իր իշխանութեան սահմաններում։ Բայց շրջապատող կամարիլան օգնութեան հասաւ։ Աճապարեցին յանձնաժողով կազմել և ուղարկել խրատելու ալբանացիներին։

„Ֆրանկֆ. Ցայնտունգ“-ի Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ իբր հրահանգուած է քննիչ յանձնաժողովին՝ փորձել ալբանացի կամաւորներից „Համիդիէի զօրագնդեր“ կազմակերպելու։ Դա նոյն ընթացքն է, որ բռնել է սուլթանը քրդերի վերաբերմամբ։

Ալբանական անցքերի առթիւ, իմանում ենք, որ սուլթանը հեռագրել էր ցարին, որով խոստացել էր անմիջապէս վերջ դնել խռռնակութիւններին, միայն թէ ցարը իր ազդեցութիւնը գործ դնէ Մօնտենեգրոյի իշխանի վրայ, որպէսզի վերջինս հաշտարար դիրք բռնէ։ Այդ հեռագրից յետոյ երեք օր չանցած՝ Մօնտենեգրոյի իշխանը իր շնորհակալութիւնը յայտնեց սուլթանին, խաղաղութիւնը շուտ վերականգնելու համար... Խօսք չկայ, որ եթէ Թիւրքիայի ու Մօնտենեգրոյի յարաբերութիւնները չափազանց լարուէին իսկ, Բալկանեան խաղաղութեան վտանգ չէր սպառնում, քանի որ դարձեալ Ռուսաստանն ու Աւստրիան պատրաստ էին ամէն պարագայի հանգցնել հրդեհը։

Նորագոյն տեղեկութիւնների համաձայն՝ դրութիւնը հանդարտ է Ալբանիայում։ Նիկօլա իշխանը մի քանի պահանջներ դրեց, որ սուլթանը խոստացաւ ի կատար ածել։

„Կարգը“ իբր թէ վերահաստատուած է Եմենում ևս։ Բայց նա չի յապաղիլ շուտով վերստին ալեկոծուելու։ Պաշտօնանկ է եղած Ֆայզի փաշան, որը իբր թէ ապստամբական շարժման պարագլուխն է եղել։ Դա նոյն-Ֆայզին է, որ 1893 թուին 40,000 զօրքով ղրկուեց Եմեն ճնշելու բռնկուած ապստամբութիւնը, որը աւելի ահաւոր էր, քան այժմեանը։ Կառավարութիւնը ուզում էր այն ժամանակ բռնի կերպով հարկեր մտցնել։ Զինուած արաբները յարձակուեցին թիւրքերի վրայ և զարհուրելի կոտորածներ արին։

Անտարակոյս „խաղաղութիւնը“ իրաք չհաստատուեց Եմենում, ինչպէս որ չէր հաստատուել 1893-ին։ Բռնի հարկերի ռէժիմը պիտի շարունակի անհրաժեշտաբար, և ուրեմն պարբերական ապստամբութիւնները անպակաս պիտի լինին։

Մինչդեռ բազմաթիւ կենտրոնախոյս ուժերը երկրի զանազան կողմերից յամառ ըմբոստութեամբ կը շարունակեն իրենց դաւերն ու խժդժութիւնները, — օսմանեան պետութեան գոյութիւնը մի ֆիկցիա կը լինի, մի վեթխարի մարմին փխրուն ոտքերի վրայ։ Այն օրը միայն, երբ իւրաքանչիւրը այդ ուժերից, իբրև մի անդամ ընդարձակ դաշնակցութեան՝ ձեռք կը բերէ իր օրինաւոր ինքնավարութիւնը, այն օրը միայն տաճկահպատակ ժողովուրդները, որոնք ամենքն էլ թագուն կամ բացարձակօրէն մռնչում են այսօր իրենց ողբերգական թշուառութեան մէջ, կը վաստակեն իրական խաղաղութիւն և անդորրութիւն։

* * *

ԿՐԷՏԷ-ի հարցը մօտենում է լուծման։ Գերմանիան և Աստրիան ասպարէզից քաշուելով, մնացած չորս մեծ պետութիւնները ընդհանուր համաձայնութեամբ որոշել են գէթ ժամանակաւոր կերպով մի տանելի կացութիւն ստեղծել կղզիում, որի դրութիւնը ներկայումս աւելի

քան ողբալի է: Վերջին տեղեկութիւններին նայելով, պէտք է անյապաղ սահմանել մի ժամանակաւոր կառավարութիւն՝ կազմուած կրէտական ազգային ժողովի ներկայացուցիչներից եւ այնտեղ եղած ամիրալներից: Ազգային ժողովը ազդարարել է, որ ժամանակաւոր կառավարութիւնը հաստատուելուց՝ անմիջապէս պիտի պահանջէ տաճկական զօրքի եհռացումը Կրետէից եւ կամ նրա կենտրոնացումը կղզիի մի որոշ անկիւնում: Ինչ վերաբերում է Գէորգ իշխանի թեկնածութեան հարցին, ազգային ժողովը կտրակի յայտնել է, որ կրէտական ժողովուրդը յունաց արքայորդուց զատ՝ ոչ մի ուրիշ կառավարիչ չպիտի ընդունէ եւ որ նա նայում է ժամանակաւոր կառավարութեան վրայ, որպէս մի միջնաթագաւորութեան, որին պիտի հետեւէ իշխան Գէորգի վերջնական հաստատումը:

ՊՐՕԼԵՏԱՐԻԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ֆրանսիական, բելգիական եւ մանաւանդ գերմանական վերջին պարլամենտական ընտրութիւնների հետեւանքը ցնծութեամբ ողջունւում է այսօր համայն աշխարհի բանւոր ընդհանրութեան կողմից: Պրոլետարիատը ամեն տեղ տարաւ յաղթանակը. բուրժուազիան եւ հողային աւատականութիւնը ամօթալի պարտութիւն կրեցին: Գերմանական պրօլետարիատի արտասովոր աջողութիւնը, որ ակներեւ եղաւ յունիսի 16-ի ընտրութիւններին, պսակեց հարեւան երկրների սօցիալիստական յաղթութիւնները:

Սօցիալ-դէմօկրատիան, չնայած կառավարութեան եւ պահպանողականների կողմից լարած տմարդի մեքենայութիւններին, չնայած այն կատաղի եւ անողորմ պայքարին, որ նրա դէմ մղում էին ձեռք ձեռքի տուած գրեթէ բոլոր բուրժուազական կուսակցութիւնները, — սօցիալ-դէմօկրատիան յաղթանակեց: Եւ այդ յաղթութիւնը, մի անգամ եւս եկաւ հաստատելու սօցիալիզմի անսայթաք ու վիթխարի յառաջընթացութիւնը:

Աշխատաւորների միլիօնաւոր մասսան մի սիրտ, մի հոգի դարձած, կարմրագոյն դրօշը պարզելով, սլացաւ դէպի ընտրողական կռուի դաշտը եւ առաջին գրոհին վաստակեց 32 մանդատ: Կրկնաքուէարկութիւններին նա գրաւեց 25 տեղ եւս, այնպէս որ սօցիալիստ պատգամաւորների թիւը Ռայխստագում հասնում է այժմ 57-ի, ինն հոգով աւելի, քան մինչեւ օրս էր: Այն ինչ պահպանողականների եւ բուրժուազական յետադէմների թիւը աստիճանաբար նուազում է:

Գերմանական սօցիալիստների մի քանի զգալի կորուստները նսեմանում են այն մեծ յառաջդիմութեան հանդէպ, որ նկատելի է սօցիալիստական ընտրողների թւի մէջ: Այդ թիւը հինգ տարի առաջ մօտ 1,800,000 էր, այսօր, համարեայ, երկու ու կէս միլիօնի է հասնում: Այդ կողմից ոչ մի ուրիշ մարմին չի կարող համեմատուել Սօցիալ-դէմօկրատիայի հետ. նա ամենաուժեղ կուսակցութիւնն է Գերմանիայում: Մի անգամ եւս զգացին մարդիկ, որ սօցիալիստական կուսակցութիւնը առաջապահն է միշտ աւելի բորբոքւող սօցիալական շարժման, որի վերջնական կէտ նպատակն է՝ վաղուց հռչակուած եւ երբէք չմարմնացած իդէալների իրականացումը՝ հաւասարութիւն, ազատութիւն եւ եղբայրութիւն:

Սակայն ապագայի տեսակէտից չէ միայն, որ պրօլետարիատի յաղթանակը ծափահարւում է մարդկային տանջւած ընդհանրութիւնից: Ո՞ր կուսակցութիւնը արդեօք պիտի հոգար անկեղծօրէն աշխատաւոր դասակարգի կացութեան բարւոքումը հէնց ներկայ հասարակութեան շրջանակներում: Ո՞վ պիտի սանձահարէր ժողովրդասպան ռէակցիան, ո՞վ պիտի խափանէր այնքա՜ն մոլեգնութեամբ Բիսմարկներին ու Հանոտօններին, միահեծան կամ սահմանադրական բռնապետութեան անթիւ ու անհամար խնկարկուներին: Մի ժամանակ ռամկավարութիւնն էր այդ դերը ստանձնել. բայց նա հետզհետէ կորցնում է իր արմատական բնաւորութիւնը եւ արդէն երբեմն իսկ սօցիալիզմի ահը նրան եւս քշում է դէպի ռէակցիայի բանակը:

Սօցիալիզմի եւ մանաւանդ գերմանական սօցիալիզմի հսկայական աճումը օրուայ հարց է եւրոպական մամուլի մէջ: Խոշոր արդիւնաբերական քաղաքները մին միւսի ետեւից անցնում են սօցիալիստների ձեռքը: Իսկ վերջին ընտրութիւններից երեւաց, որ սօցիալիզմը առատ հունձ ունի նաեւ գիւղերում:

Ո՞ՒՐ Է ԱՆԿԵՂԾ

ԽԱԼԻՖԱ՞Ն ԹԷ ԵՐԿՆԱՅԻՆ ԿԱՅՍՐԸ

—o—

Եւրոպական մամուլը սա երկու անսպասելի լուրերը հրատարակեց:

Չինաստանի կայսրը անխտիր բոլոր իր հպատակներուն, մանաւանդ ազնուական դասակարգին, հրաւէր կընէ որպէս զի դուրս ելլեն իրենց երկրէն, Եւրոպա պտոյտ ընեն, դիտեն նոր աշխարհներ, նոր մարդիկ, մօտէն ճանչնան կամ ուսումնասիրեն եւրոպական արուեստը, քաղաքակրթութիւնը, վարքը բարքը, եւ վերադառնալով իրենց երկրին մէջ ծաւալեն...

Ապտիւլ Համիտ, ծովերու եւ ցամաքներու կայսրը, որուն առջեւ ծնկներն ալ կը սարսափին, խնդրեր է Լօզանական ընկերակցութենէն որպէս զի առաջիկայ Միջազգային մամուլի վեհաժողովը, Վոսփորի Հընաղ ափերուն վրայ, իր Բարձր հովանաւորութեան տակ տեղի ունենայ...

Երկու երեւոյթն ալ պահ մը ապշութենէ ետքը, խորհրդածել կուտան: Որովհետեւ վերլուծական դարու մէջ կ'ապրինք, կարելի է ըսել, զանկերու-տակ այլեւս գաղտնիք չիկայ, ինչպէս արեւուն տակ նորութիւն չիկայ... մարդը իր հանգամանքներուն ստեղծութիւնն է:

Ատոր համար, Եւրոպայի ողջամիտ մամուլը հիացումով արտատպեց չին կայսեր բարի տրամադրութիւնը. իսկ Եըլտըզ քէօշկի շուքը, որուն տակ այնքան լոյսեր խաւարած են եւ ուր, կեդրոնական Ափրիկէի ճամբորդութեան պէս ամէն քայլափոխիդ ոսկրտանքներու, թացթաց զանկերու կը հանդիպիս, չը կրցաւ հրապուրել եւրոպական մամուլի գոնէ երեսպաշտութիւնը:

Ո՞ւր է անկեղծ Չինաստանը թէ Թիւրքիան:

Չինաստանը մինչեւ դանակը ոսկորին չդպաւ խելքը փորէն գլուխը չելաւ. ու դէմքին վրայ պռստում մը առաջ չեկաւ. բարոյական թերմաշ պատուիրաններու մէջ կամակոր կը կարծէր թէ Եւրոպան միայն միաշէն էր... եւ գուցէ կը խորհէր որ արեւը ինք է Եւրոպա դրկողը: Այսպէս դարեր 400 միլիոն բնակիչ անտեսական ու ցամաք պարեցաւ անշարժ հանգստականութեան մը մէջ...

Եկաւ ժամանակ մը որ Եւրոպան փորձեց զայն մշտել... բայց մէկ կողմէն կեւլէր միւս կշտին վրայ կը պառկէր... հպարտ մեռել մը...

Չին եւ ճաբոնական պատերազմը միայն սարսեց այդ վիթխարի անհոգութիւնը. որ դռնփակ, մինակ արեւին բաց իր երեսը, „սրբենի աշխատութեան“ մը մէջ հողէն կառնէր ու հողին կը դառնար:

Իրերի բնութիւնով Չինաստան „միաշէն եւրոպացիներուն“ կը դառնայ, ապա թէ ոչ ճարճատիւնէն ետքը, մեծ փլուզում է:

Պէտք է ընդունիլ թէ, Չինաստան երբ Եւրոպան դեռ „մօրը փորն“ էր գիտութեանց նախատարերքը կը ճանչնար. միայն թէ հետամուտ չէ եղած կատարելագործելու... իր բանականութիւնը կոյր հնազանդութեան մը տակ ճզմուած է: „Դուն քեզ բարելաւելու համար, օրըօրին վերանորոգուէ“ կամ „Թագաւոր մը անընդունաբարելի է, երբ ժողովրդին սիրելութիւնը զրաւած է“ կըսէ Կոմփիւկիոս: Երբ կեանքի սկզբունքի այդ զանձերը զուգալին եւրոպական քաղաքակրթութեան հետ, այն ատեն „Միջավայրի ծաղիկը“ կը ծլի ու եղումեղը ըլլող այդ երկիրը բոլոր աշխարհի բարիք մը կըլլայ: Ջունենալով կրօնական մոլեռանդութիւն, թեթեւհոգի պիտի քալէ մարդկութեան իտէալին, մանաւանդ երբ երկաթուղիներու դղրդոցը ու ճչոցը հետամն-

դեն օդային աստուածները որոնք դեռ կը փսփսան ինքնաբաւ չինացիին ականջին. այն ատեն կիրագործուի իրենց յեղափոխական փիլիսոփային խօսքը թէ „երկինք ժողովուրդին ականջով կը լսէ":

*

Չինական առաջդիմութեան ցանկութիւնը անկեղծ է: Առտուն դեղին մարդերը ափ ափի առնեն մեր դռները, պիտի հետաքրքրուին մեզմով պիտի հետաքրքրեն մեզ ու պիտի վերադառնան աւելի ճանչցող „աշխարհի բաներուն":

Աշխարհք մարդ կըլլայ, Թիւրքիան մարդ չըլլար: Թիւրքիան տգէտ, կեղծաւոր, խարդախ, ոչ զգացումի ու պատուի սրբութիւն ճանչնալով, ատելով կատէ քաղաքակրթութիւնը: Գիտնալով օսմ. կայսրութիւնը, գիտնալով այն ղեկավարող գրգիռն ու սեւ աչքերը — որոնք երկրային սահմանէն անդին ալ կը փնտռեն — կը պժգանք սուլթանի հաշող կեղծաւորութենէն որ ամէն անամօթութիւն պարտկել կուզէ:

Սուլթանի հրաւէրը զարհուրելի հեգնութիւն մըն է քաղաքակրթութեան եւ մամուլի դէմ զոր երբեմն... ոսկի շղթայով սանձահարեց: Երկրի մը մէջ ուր Իզզեդի ու Մալիւմաթի պէս փողոցի թերթեր կը հրատարակէին, „մամուլի վեհաժողով" գումարել ամօթ է: Պոլսոյ մամուլը անբարոյականութեան շունչով մը կը ներշնչուի. որոնք սուլթանը աստուածացնելէն ու ոճիրներ ջատագովելէն զատ ուրիշ բան չեն ըներ:

Ու այդ լկտած փատիշահն է որ երես ունի լուսաւորութեան ներկայացուցիչները Պոլիս հրաւիրելու. Թերեւս մտադիր է „լուսաւորութեան մեծ վեհապետի" տիտղոսը գողնալ. աշխատելով որ իր փառաւոր թագաւորութեան օրերը չհատած, ծայնահատ մը դնէ „Մեծ Մարդասպանի" աղեղաբին վրայ...

Այդ մարդը ոչ մէկ բարի ցանկութիւն ունի, եթէ մարդ մը ներկայացնէ օձ մը կը գտնես մէջը...

Թերեւս մամուլի պալլատիոնը իր եղեռնագործութիւնները ծածկելու խրախոյս մը ըլլայ...

Իրաւ է, Մուհամմէտ կըսէ „գիտութիւնը եթէ Չինաստան ըլլայ գնա փնտռէ". խալիֆան ոչ միայն չփնտռեր այլեւ երկրին մտաւորականութիւնը սուսերամերկ կը հալածէ նոյն իսկ Թիւրքիոյ փշած սահմաններէն անդին...

Հակառակ պարագային կը հարցնենք ղազի Աբտիւլ Համիտին, կը բարեհաճի՞ արդեօք որ հայ յեղափոխական մամուլն ալ մասնակցի պատկառելի վեհաժողովին, որուն անդամներէն շատերը իր ոսկեդարը վայելած են արդէն...

Հարց է...

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

—

Միջազգային կացութիւնը հեռի է սրտերը թեթեւ պահելէ: Բոլոր պետութիւններն ալ կլանելու բօշայական քաղաքականութիւնով կըսպաննեն ժամանակը եւ ... անպաշտպան ազգերը՝ կարծես անտէրանտիրական երկրի մը վրայ կապրինք. գողցող գողցողի... Հոգիներու ասանկ լղճուկ դար անդէպ երեւոյթներ են պատմութեան մէջ: Տնտեսական կամ առեւտրական շահերը ու ազգային մեծամոլութեան եռքը պատրւակ կընծայեն ամենէն անմարդավարի բռնաբարութիւններու:

Երանելի՜ սկզբունքները, որոնցմով կարգ մը ազգեր, գոնէ պատմականօրէն, կը պարծենան, ջուրը դրուած են... չհոտելու համար: Կան ազգեր որոնք չզոհելով իրենց շահերը, ուրիշին մարդկային իրաւունքներն ալ յարգելու քիչ շատ խնամտանքը կընեն: Բայց կան նաեւ չտես ու անոպայ ազգեր որոնց փտած ջղայնութիւնը մարդկօրէն զգացումներու անհաղորդ կընէ:

Կրօնը, այդ յաւիտենական միջնաբերդը մարդկային կեղծութիւնները պարտկելու ծառայած է միշտ: Այսօր, քաղաքակրթութեան ամպհովանիին տակ, կրօնական ոգով աղերսներ կըլլան որ Աստուած սուրերնին կտրուկ ընէ՝ որ Աստուած ուրիշէն առնէ իրենց տայ: Հոն ուր կրօնը, բերնի ծամուք է, յաճախ մարդկային բարոյականի չգոյութիւնը կապացուցանէ: Մինչեւ իսկ բարոյազուրկ ազգ մը մոլեռանդ ազգէ մը նախընտրողներ կան:

Որչափ ատեն որ կամայական շահերը գրգիռ ըլլան մարդոց իրարու հետ զզուելու, եւ տկարը որքան ալ իտէալի վերելքին վրայ գտնուի, կեր ըլլայ շնական անյագութիւններու, ընկերային դղրդումները, ժաժերը անպակաս պիտի ըլլան:

Թերեւս օր մը զգաստանան մարդիկ, երբ այլեւս գիտութիւնը Նեմեսիսի կամ Թեմիսի անուններով կաստուածանայ. երբ փոխադարձ վրէժի ահը կը նուաճեցնէ ապերասան ամբարշտութիւնը:

Մեր ապրած դժնդակ կեանքը ստեղծեց պայմաններ, որոնց տակ ապրողը բնականօրէն դուրս պիտի նետուէր իրերու ու գաղափարներու բնաշրջումի տրամաբանական արահետէն, եւ ինքզինքը պիտի նկատէր ընկերութենէն անկախ ու օտարոտի արարած մը: Անհատը ջղերուն ամբողջ ելեկտրականութիւնը մարմրուն բիբերուն ու ափերուն մէջ խտացուցած անողոք կեանքի պայքարը կը մղէ բռնական քմահաճութիւններուն դէմ՝ գիտակցական ու յուսահատական աննահանջ թափով մը: Ափսո՜ս. իտէալի օրօրը դեռ չկրնար դէնընել թշուառութեան մղձաւանջը...

Մարդիկ ապրիլ կուզեն խաղաղ ու երջանիկ. իսկ աշխարհի մէջ լոկ դահիճներ ու խորթ զգացումներ կան: Գերեկնալու ժամանակը չէ, վրէժխնդրութենէն միայն կը սոսկայ մարդ, ատոր համար ամպրոպային Եհովան, իր գերագոյն իմաստութիւնով կորոտար Իսրայէլի գըլխուն ըսելով „Ես վրէժխնդրութեան Աստուածն եմ", եւ կը պարծենար թէ եօթը պորտէն վրէժ կը լուծէր: Արդար վրէժխնդրութիւնը երբ հիմնուած է արդար պահանջներու ու իրաւունքներու վրայ գերագոյն արդարութիւնն է:

Ընկերային արդի անճոռնութիւններն ու անխղճութիւնները, կուրօրէն այդ բնական ու կարճ դատաստանին կը թիավարեն: Եւ ծիծաղելի՞ չէ երբ անազնիւները մարդկութիւնը ազնուացնելու յաւակնութիւնով կը խարխբեն մեզ: Նորածին մանուկը պալուրներով կապկպուած պլասերուած թթուաշ կաթը կը ծծէ: Թշուառութիւնը, անգթութիւնը ընկերութեան արգանդին մէջ մակարդը կը դնեն ատելութեան, որ ձեան հիւսի պէս երթալով լեռան պէս կըլլայ, որուն համար այլեւս մահը խայթոց չունի եւ այս գերագոյն բանտը որ աշխարհ կը կոչուի, հրապոյր չունի: Ապահովապէս վրէժխնդրութեան մրրիկը իր ետեւէն կը բերէ վճիտ արշալոյս մը եւ ընկերային բնականոն վիճակ մը...

Այսպէս պէտք է վարուիլ Թիւրքիոյ գազիր վարչութեան դէմ, իբր արիւնռուշտ գազանի մը հետ...

* * *

Թիւրքիոյ համար շատը գնաց քիչը մնաց: Կերեւի դառնութեան բաժակին մրուրը իրեն վերապահուած է: Քաղաքական անցուդարձերը, Թիւրքիոյ ներքին ցնցումները, դիւանական հրմշտկումները, բոլորը սուլթանի շուրջը կը դառնան: Ասիոյ մէջ ոեւէ քայլափոխ՝ զգալի հակահարուած մը կուտայ Թիւրքիոյ. ամէն բանի ճօթը Թիւրքիա կը յանգի: Միայն թէ տէրութիւնները երկիւղածութիւնով կըսպասեն որ արիւնը լաւ մը մաքրէ այդ մարդատեաց երկիրը...

Ռուսիա գամփռի պէս կը հսկէ սուլթանի գլխուն վրայ։ Մէկ ոտքը Չինաստանի վզին դրած, մէկալով փատիշահին պկին կոխած, հաւու պէս կը քիչքիչէ միւս տէրութիւնները։ Իբր թէ սուլթան Համիտ, անճրկած, իր արիւնլուայ ձեռքերը նորէն կիրկնցնէ Անգլիոյ, որ երբեմն Թիւրքիոյ ամբողջութեան աւանդական ախոյեանն էր։ Նկատելի է որ սուլթանը նեղ օրին աւելի շատ սրտեցաւ բարեկամներ կը գտնէ քան լայնօրին։ Երբ մէկը երես դարձնէ, միւսը կը ժպտէ. ու հազարումէկ ճիլվէներով նորին վեհափառութեան հաճոյակ թիկնապահութիւնը ցոյց կուտան։

Խրոխտ է սուլթանը... գոնէ իր չարագործութիւններուն մէջ ազատ ձգուելուն համար։

Մեր ճակատագիրը կապւած է Անգլիոյ և Ռուսիոյ յարաբերութիւններէն ու մեր ներքին ուժեղ կազմակերպութենէն։ Սուլթանի համար վերջինը աւելի զարհուրելի է, քանի որ հայ յեղափոխութիւնը կատակ չըներ և ոչ ալ յարաբերական խնդիրներ ունի, ամէն րոպէ իր կամքին ու գործունէութեան տէրն է։

Ռուսիա շատ խորամանկ և միանգամայն շատ անխիղճ քաղաքական ուղղութիւն մը ունի այս րոպէիս։ Թիւրքիոյ՝ իբր „հոգևարք մարդու" մը փաղաքշանքը կուտայ. չուզելով կարծես անոր վերջին տառապանքը աւելի խռովել, եթէ յարմար առիթը ներկայանայ մէկ ոստումով իր նպատակին հասած է արդէն։

Անգլիան ալ կըսպասէ, բայց իր դիրքը կեղծիքի ձև ունի։ Այն օրէն Անգլիոյ բարոյական արևը մարը մտաւ երբ Թիւրքիոյ դէմ պոռացքակեց, փնչեց, ու վերջը առանց նշկահելու ագին փորը քաշեց։ Կլեց ամէն թշնամանք, երբ իր շահերը այնպէս կը պահանջէին։ Թերևս առիթի մը կըսպասէ, մինչև որ Սալըզպրին եղէգէ սլաքները երկաթջրէ։ Վանցինները աղուոր ասութիւն մ'ունին որ Սալըզպրիին քաղաքականութիւնը լաւ կը պատկերէ. „Էսա մասիկ չեմ տայ". մարդ մը որ միշտ դէմ կը դնէ, կըսպառնայ ու միշտ տեղի կուտայ։ Ասանկ եղաւ Անգլիոյ վերջին քաղաքական շաւիղը։ „Էսա մասիկ չեմ տայ"։

Անգլիա ի հարկէ սուլթանին մուրուքը համբած է. և այս անգամ չենք կարծեր որ առանց անկէ դրական երաշխաւորութիւններ առնելու հաւատ ընծայէ հրեշտակային խալիֆային սրտաբուխ խոստումներուն։ Այդ անմահ փատիշահը, գլուխը դէսուդէն զարնելով կը ջանայ քաշքշել իր մեղապարտ գոյութիւնը։ Արտասովոր երևոյթ մը... ազգ մը կը մեռնի ու անհատ մըն է որ կապրի։ Սըր Ֆիլիբ Գըրրի, Պոլսէն մեկնած օրը սրտի ցաւով մը կըսէր „իմ նախորդներուս նման ես ալ գտայ որ Թիւրքիան յուսախաբութիւններու երկիրն է"։

* * *

Միակ մարդը որ Թիւրքիոյ լէշերէն կօգտուի, Վիլհելմն է, Գերմանիոյ օգոստափառ մուրացկանը, որ սուլթանի անհաշիւ ընծաներու փոխարէն, շուն մը ղրկեց իբր նուէր. անշուշտ հոտառուկ շուն մը որ ամէն դաւ երևան պիտի հանէ... կերբերոս մը։ Ի՛նչ կծու հեգնութիւն, „Աստուծոյ շուքը" շունով մը վարձատրել... Գերմանացիներուն կռնակը ալ գետին չիգար, քանի որ իրենց կայսրը իր ժողովրդին ճիտին վրայ մեղքի պէս չի ծանար, ինչպէս Համիտը։ Քայզէրը „տուրտուր" է միշտ և ոչ „առառ"։

Քիչ օրէն Գերմանիոյ կայսրը նորէն Թիւրքիա պիտի այցելէ... իր ցանածը քաղելու համար... անոնցմէ որոնք մոխիր կը ցանեն ու ցորեն կը քաղեն.:. Նախ պիտի երթայ Երուսաղէմ Քրիստոսի պտտած տեղերը պիտի կոխէ. „Սիոնի դստերք"-ներուն տեղ, գերմանական հրացաններով պաշխպօզուքներ պիտի դիմաւորեն զինքը ու պիտի ովսաննաեն "պինլէր եաշա ալմանիա սուլթանը"։ Ո՛վ գիտէ տենչանք մը չպիտի ունենայ ինքզինք „Աստուծոյ որդի" անւանել տալու ինչպէս Աղեքսանդր „Արամազդի որդի" անւանուեցաւ։ Սրտակսկիծ տարագիր հայ պատրիարքը չ՞պիտի գոռայ հոգիին խորէն „Այստեղ աւազակներու, ոճրագործներու այր չէ, այլ աղօթքի"... Երուսաղէմէն քիչ մը անդին Յորդանանը կայ սակայն...

Անկէց պիտի երթայ Պոլիս սուլթանի անուշանմահ վարդէ օշարակը խմելու կամ... Թիւրքիոյ գանձին տակը քերելու։ Դժբախտաբար քայզէրը ուշանուշ այցելութեան քաղաքավարութիւնը չունի։ Երէկ էր գնաց թալլեց Պոլիսը, վաղ նորէն պիտի վերադառնայ կայսերական անհամար պախշիշներով։ Այդ բախտախնդիր այցելութիւնը քանի մը հարիւր հազար ոսկիի պիտի նստի աղուհացի կարօտ Թիւրքիոյ խեղճ ժողովրդին որուն արիւնքրտինքով վաստկածը հազարոտարները կը վայելեն։ Ի՞նչ է այդ խեղճ ժողովրդին մեղքը, որ հողոտ հաց կուտէ բախտախնդիրներու քէյֆ պատճառելու համար...

Կիյօմը լաւ հեծաւ սուլթանի գաւակին վրայ։

Ամբարիշտներուն մեղը բրէտները կուտեն արդէն...

* * *

Թիւրքիա ծախու երկիր է։ Երկիր մը որ պտիկ մը բարոյական քրտինք չէ թափած իր հողը արգասաւորելու համար, անոր ապրիլը մեղք է։ Սուլթաններու կայսրութիւնը յաւէտ օձի պէս պաղ մնաց իր հպատակներուն աչքին, ու չկրցաւ ինքզինք սիրցնել։ Թիւրքերը զուր կը հրճւին, Կլատսդոնի մահը հոգեդարձ չըներ ծուծը մաշ Թիւրքիան, երբ անդին անկարեկիր բռնակալի մը սարսափին տակ մաղմաղ կրակի տանջանքով միլիոնաւոր ժողովուրդներ կէրին կը մրկին։ Թիւրքիան անձնասպան կըլլայ, իր սևօրին մէջ սուտարև մ'իսկ չտեսած։ Յառետես վարդապետութիւն „գերագոյն անձնասպանութիւնը" իսլամական զգալազիրկ համակերպութիւնով մը լուսապսակւած...

Թիւրք ժողովուրդը որուն վրայ հաւատքները ջըհեղեղի աղաւնիին պէս կը թրվռան, դարաւոր մրափէ մը արթննալու ճիգեր կընէ. բայց հեշտանուշ երազներուն մէջ, հաշիշ ծխողի մը պէս մուլթումոխիր կորած, գիտակցութեան խորթ հպումէն կը դողայ։ Գուցէ օր մը ճանչնայ սխալը, ու երկու քար առած ծեծէ իր գլուխը ու կուշտ մը լայ, բայց շատ ուշ... երբ այլևս կռնծած, զուրկ բարոյական կորովէ, ապրած ըլլալով ոչ-իրական կեանք մը, հովի կամ ճիչդը շուքի պէս անցած պիտի ըլլայ օրօրոցէն մինչև գերեզման. մին էլ մէհտի իլ էլ լահտի մարգարէին ճակատագրական բացագանչութեան համեմատ։

Մաղթենք որ այդ ոգէտ բայց լաւութեան ալ հակամէտ բարեմիտ ժողովուրդը կեանքի ու մահւան ուղղագիծ անջրպետին վրայէն աննպատակ ու սևերես չանց-

նի, այլ իր անորոշ ու գերեզմանային կեանքը այլակերպէ հոգիի բարձր ըմբռնումով մը կամ սրտի հպարտ բարսուռով մը...

* * *

Երբ բռնակալի մը վախը ու կասկածութիւնը կանդամալուծեն երկրին թռիչը, երբ կառավարութիւն մը ապերասան կերպով ժողովրդին ըրածը, խօսածը ու... մտածածը կը լրտեսէ, ատոր կառավարութիւն չըսուիր, այլ գողերու-բոզերու ընկերակցութիւն մը որ մարդկային ապիկարութիւնը կը շահագործէ: Մինչև օրս Թիւրքիան, օրինական ուժէ զուրկ. ապօրինութեան երկիրն եղած է... թերևս իր գոյութիւնն ալ պատմական թիւրիմացութիւն մը ըլլայ: Բնական օրէնքով ալ չէ կառավարուած ինչպէս շատ մը վայրենի երկիրներ. ոչ մէկը ոչ միւսը: Փաշիշահներու ու փաշաներու ցոփութիւնները ու շլայտութիւնները Թիւրքիոյ պաշտօնական առաքինութիւնը եղած են:

Ու դեռ կան մարդիկ, որոնք անխղճօրէն Թիւրքիոյ ա ն փ ո փ ո խ ո ւ թ ե ա ն դատաւոր կը հանդիսանան:

Անխտիր բոլոր ազգութիւններուն ապստամբական ալիքները որոնք լափ կուտան Եըլդզի կառափնատին, ապացոյց մը չէ՞ որ Թիւրքիան դժոխք է ու իր ըբուութիւններու մէջ անուղղայ:

Քանի՞ներրորդ անգամն է որ Արաբիա կապստամբի սուտ խալիֆային դէմ: Արաբական նոր ապստամբութիւնը որ մեծ տագնապի մը երևոյթը առաւ իբր թէ զսպուած է: Թերևս... ահագին կաշառքով... „Արաբին երակ"-ը կեփի: Թիւրքիա, ինք փորձանքէ փորձանքներ ժողվեր գլխուն:

Արաբ ժողովուրդը ինչ ալ ըլլայ, անապատին մէջ ազատ ու ծաղկուն սիրտ մը կը կրէ, ինչպէս Թիւրքիան ծաղիկներուն մէջ անապատ սիրտ մը...

Խալիֆայութեան կորուստը, ապագայի տեսակէտով, Թիւրքիոյ համար օգտակար կրնայ ըլլալ, որովհետև այդ անունը առաջադիմութեան մեծագոյն քարգայթակղութեանն է: Խալիֆան չի կերպարանափոխուիր, որովհետև Աստուծոյ շուքն է: Ամենէն ազատախոհ Թիւրքն իսկ կը թօթովէ այդ դիւթական անունը լսածին պէս, և գաղափարի շարժումը կամ զէնքնկէց կըլլայ այդ սին ու... աղիտաբեր կուռքին առջև կամ ետեւ կը սողայ: Անանկ կը կարծեն թէ խալիֆայութեան հմայքին կապուած է նաև օսմանեան կայսրութեան բախտը:

Արաբիան թող ազատի, որ Թիւրքիոյ համար վնասէն զատ օգուտ չունի: Զգել արաբշուլլին իր նժոյգին ու անապատին հետ ու բզքտել Ա Լ Լ Ա Հ ի ս տ ե ր ը որպէս զի քիչ մըն ալ արևարեգակ ցաթէ...

Երիտասարդ Թիւրքիան աշխատելու է ջնջել այդ եկամուտ նախապաշարումները, նեղցնել երազի շրջանակը, ջնաալ վերակազմել պարկեշտ Թիւրքիա մը աւելի կուռ աւելի հանրամարդկային խոհալով քան համիսլամութեան ամուլ ու հակամարդկային բանդագուշանքները, ապա թէ ոչ անծակ-քուն մընէ Թիւրքիան...

* * *

Հիւսիսային Ալպանիոյ վերջին անցքերը պահ մը մտահոգութիւն պատճառեցին. բայց շուտով զօրաւոր մատ մը խաղաց ու կրակը ծածկեցին... մոխիրի տակ: „Չև է հասեալ ժամանակ":

Ալպանիա կը նկատուի Թիւրքիոյ ամենէն բռնկուն անկիւնը. բայց ինչո՞ւ չըսել Թիւրքիան ամբողջ քթանի բռնկող տարր մընէ: Ինչպէս Հայաստանը խրօներ, Ալպանիան ալ „քիթապսղ արնավուտ"-ներ ունի, որոնց մէկ մասը քրիստոնեայ են միւս մասը մահմետական, քիչ շատ նախնական բնազդներով: Բայց այդ այլակրօն ու համացեղ տարրերը սուլթանական „պառակտիչ" քաղաքականութեան շնորհիւ, զիրար կատեն ու իրարու միս կուտեն: Սուլթանի իտէալ քաղաքականութիւնը եղած է, համիսլամութեան երազը, և իր երկրին մէջ իսլամական տարրին ուժեղացումը, զանազան պատրուակներով ճղակտոր ընելով քրիստոնեայ տարրը. չէ՞ որ իսլամութեան մէջ ազգութիւն չկայ. մահաճիրը, չէրքէզը, լազը, արնավուտը, քիւրդը կրօնով իսլամ, հետևապէս թիւրք կը սեպուին, կամ խալիֆայական: Դիւրին կը ձուլուին անոնք, (ինչպէս կըլլան հետզհետէ գաղթական իսլամ ազգութիւնները), երբ անոնք ցեղային հպարտ ու պահենի աւանդութիւնով մը թըրծուած չեն: Օր մը այդ տարրերը պիտի խմորուին, համաձուլուին ու օսմանեան հզօր կայսրութիւնը պիտի կազմեն... Թիւրքիան իսլամներուն... ահա չուկէտը փտիշահին: Ամենուրեք ուր քրիստոնեաներուն ու մահմետական ո և է տարրի մէջ ընդհարումներ տեղի ունենան, երբ քրիստոնեաները տակ երթան, կառավարական իշխանութիւնները ճիկ չեն հաներ, երբ իսլամ տարրն է որ կը նահանջէ, իսկոյն զօրքը կը միջամտէ իր կրօնակցին հետ զինակցելով.... Վերջի ալպանիական անցքերուն ատեն, որ ցեղային արեանվրէժ (ֆէտա)-ի մը հետևանքն էր, երբ իսլամ արնավուտները նեղն ինկան զօրքը հասաւ իսկոյն, որով երես առին մահմետականները և քրիստոնեաները ցիրուցան Մօնթէնէկրօ ապաստանեցան: Մօնթէնէկրօ հիւրասիրեց հալածախոյսները և մինչև իսկ Թիւրքիոյ նկատմամբ սպառնական դիրք մը բռնեց: Մօնթէնէկրոյի յանկարծական խիզախ վարիշքը թթուեցուց նաև կախերես Աւստրիան. որ Ալպանիոյ և Մակէդոնիոյ վրայ քաղաքական յաւակնութիւններ կը տածէ: Աւստրիան փրցունքներով միացած կարկտան կառավարութիւն մընէ. հին տիկին վրայ նոր կարկտանով. իրերու „պղնձէ օրէնքով" փլփլկելու դատապարտուած: Մէկ կողմէն համասլաւութիւնը կը խրատէ, միւս կողմէն համագերմանականութիւնը, մաճառներ, ևն. ևն... կեդրօնախոյս ահռելի ուժով մը կը ջանան իրենց ծանրութեան ոլորտէն դուրս նետուիլ... Աստուածավախ Ժոզէֆի դիւանագիտութիւնը յուսահատ ճիգեր կընէ խրխլած շէնքը չի կործելու համար: Ամենէն պինդգլուխ տէրութիւնը՝ որ Թիւրքիոյ հարստահարուող ժողովուրդներուն ազատագրութեան դէմ կը պոստէ յօնքերը: Սակայն Աւստրիան ալ Թիւրքիոյ օրին ինկած է. մէկն ալ պէտք է որ անհաշտ ու խայտաբղէտ ազգայնութիւնները լռեցնէ: Կայսեր կարծեցեալ բարութիւնն ալ չկրցաւ զոդել այդ այլամերժ տարրերը: Մինչև այսօր „կրակը փչող"-ներ միայն տեսանք. նոյնիսկ իր պ ա ր կ ե շ տ դաշնակիցներէն: Թերևս Հապսպուրկի թագը վերջին անգամ մ'ալ ցոլայ այս անցաւոր աշխարհին վրայ, երբ քիչ օրէն նահապետ կայսրը իր խաղաղ բայց... յուսախաբ թագաւորութեան յիսնամեակը տօնէ: Կերևի Ժոզէֆի թաղումն ալ առանց արիւնահեղութեան պիտի չկատարուի...

Հակառակ Աւստրիոյ բռնազբօսիկ դիտումներուն, հա-

մասլաւական շունչը աւելի մեծ դեր կը խաղայ Պալքաններու մէջ։ Ցարը մեծաքանակ ռազմամթերք ղրկեց Գարատաղի իշխանին. իհարկէ երեսը նայելու համար չէր կամ սուլթանի պէս իր հպատակները խողխողելու համար։ Բանին մէջը բան կայ։ Գլորող ժամանակը իր հետ անակնկալներ ալ կը բերէ. մանաւանդ այս դարավերջին։ Ռուսիա լեղանուշ քաղաքականութիւնով մը կը սիրէ սուլթանը նեղը խօթել ու յետոյ հաճոյակատար ըլլալ. թէև սուլթանը պարբերաբար կը վարձատրէ „Բիւզանդիոնի ժառանգորդը“։ Փատիշահին պաղատանքին վրայ, Ցարը աչք ըրաւ Մոնթէնէկրոյի իշխանին որ դադար կենայ, այսպէս Ալպանիոյ յուզումը ջնջեցաւ. „ի մեծ ուրախութիւն“ արքայից արքային։ Բայց Ալպանիան միշտ հրացանը ուսին կը կրէ և կեռ դաշոյնը մէջքին։

Մանաւանդ առանց կրօնի խտրութեան ալպանացիներուն մէջ սկսած նոր բրօբականտը, „Ալպանիան ալպանացիներուն“, անոնց մէջ իհարկէ աւելի կազմակերպական ոգի պիտի մտցնէ, և դեռ Դուան դաւաճանութիւններէն բոլորովին չջլատուած, ու իրենց լեռնային անկախ ու ըմբոստ նկարագիրը անվթար պահած — որոնք անհրաժեշտ են ազատութեան համար արիւն թափող ազգերու համար — պիտի մոնչեն ապիկար փատիշահներուն երեսին „Մօռէ.՝..

* * *

Կը կարծուէր թէ մինակ սուլթան Համիտն է երկիրը կառավարողը.մօրմէն հօրմէն նաղ ընողը, սուլթանի անունով հրաշքներ կը գործէ... Եւ այս բոպէիս, փաշաներ ու բոշաներ, Եւրոպայի մէջ ալ մասնաւորապէս Բարիզի Տաճկաց դեսպանութիւնը ու Ծընէվի հիւպատոսութիւնը, մեծ գործի վրայ են... Սուլթանի սարսափը շահագործող ահագին ընկերակցութիւն մը կայ, որուն պաշտօնն է սուլթանին քունը հատնում ընել զանազան սուտուփուտ տարաձայնութիւններով և փող կորզել... Եթէ Թիւրքիոյ մէջ երեք բարեխիղճ ու ողջամիտ մարդիկ գտնուէին, զորդ որ, այդ Սոդոմ Գոմորը չէր կործանէր։

Թիւրքիան միլիօնաւոր ֆրանքներով՝ զոր իբր կաշառք քամին բերանը նետեց, կարող էր իր երկրին մէջ եթէ ոչ ցորեն գոնէ գարի ցանել։

Սուլթանի գիշերային քաղաքականութիւնը երկրին արիւնը մէջը մեռցուց։ Կը մեղքնանք, ընդհանուր երկրին շահու տեսակէտով, այն բոլոր անբախտ ժողովուրդները, ըլլան իսլամ կամ քրիստոնեայ, որոնք դաւաճանող ու ապերախտ ռէժիմի մը ներքև մարդութենէ դուրս կելլեն։

Համիտը մնռեց երկիրը, Հերակլէս մը հարկաւոր է այդ Օժիասի ախոռը մաքրելու համար։

* * *

Մարդ ցանածը կը քաղէ. Թիւրքիոյ մէջ խաղողէն փուշ ալ կը քաղեն սակայն։ Հայաստանի պղտիկ մէկ կրկներևոյթն է որ պատահեր է Պոլսոյ մէջ։

Ղազի սուլթան Համիտին քրոջ աղջիկը ծառաներով Զամշճայէն վերադարձին, քանի մը քիւրդեր կառևանգեն կառքին մէջէն ու կնձնիներու թաւուտ առագաստին մէջ, Մարմարայի հրեղէն վերջալուսին, Եըլտըզի հորիզօնը կը շառագունեն...

Եթէ սուլթանը կուզէ գաղափար մը կազմել հայ կոյսերու լլկումի մասին կրնայ իր գեղանի քրոջ աղջկան հարցնել...

* * *

Համիտական վարչութիւնը ձեռնածուի դեր կը կատարէ հայերուն հանդէպ։ Ազգին տունը քանդելով „Կիլիկիոյ տունն“ ալ հայութեան պառակտումի իբր միջոց կուզէ ծառայեցնել։ Ուրիշ հեղ ըսած ենք „Ազգին տանը“ քանդումը յեղափոխութեան արիւնը դարձած օրիկն է։ Ազգին տան վերաշինումով, Թիւրքիան կրնայ վստահ ըլլալ մեր անձնուիրութեան վրայ։

Բայց այս ամէն աղէտներուն, տառապանքներուն մէջէն դուրս կը սողան երկու անձուռնի դէմքեր, երկու արիւնքերան մարդիկ, Բարդողիմէոս ու Նուբեան. երկուքն ալ „յորովայնէ ընտրեալ“, որոնք փորերնին աւելի տիկ ընելու համար սուլթանին խեշերանքները աղբին վրայէն լեզուով վերցնելու անպատկառութիւնը ունին։ Երկուքն ալ ազգին մազի չափ խեր ունեցած չեն։ Մէկը, հոգևոր աղաբողոքին մէջ պլլած իր սրիկայութիւնները, միւսը՝ որ երբեմն հայուհեաց ընկերութիւններուն վարուժանը կը սիրէր ըլլալ, իր շքանշաններուն տակ սքօղած։ Զարմանալի է որ այդ լրբազան շաղաշուտները ազգակործան դաւաճանութիւններով այնքան ճամբայ առած են։

Պրուսայի նախկին շաներես առաջնորդը, իր թեմը սօթտելէն ետքը՝ այժմ ազգը ծախելու կողունցէն բռնուած է. պապա Համիտին սիրականը ըլլալու, կամ մանաւանդ հերատուկներու հետ անառակ կեանք մը վարելու համար...

Թրքասիրութիւնը այնքան մակրդուած է այդ աբեղային արիւնին մէջ, որ օր մը ընկերութեան մը մէջ Լաֆոնդէնի ագռաւին պէս բերանը բացած ըլլալու համար կըսէր „ինծի կուգայ թէ Հոմերը Էօմէր ըլլալու է“։ Նորին օծութեան գլուխը վեղարի տեղ կամ փաթոց մը կամ բերանը շրուշակ մը անցնելու է...

Պ. Նուբեանը, Բարթողիմէոսին հետ խուփն ու պըտուկը կը կազմեն։ Երբ այդ պետական մարդը ազգային գործերու վրայ խօսի բերնէն մեղր կը վազցնէ. յօնքերը կը ճմռթկէ հաստատելու համար որ ինք ամէն ազգային ծրագիրներու մէջ իր նկարագրի կնիքը դրած է և այնքան կը շեշտէ որ ինք իր բերնով աչքի կուգայ։ Եթէ ազգին գլուխը ճղա չէ խօթած, չար լեզուներու պատճառով է։ Եթէ երբէք ազգին ամենէն սրբազան իրաւունքներուն դէմ ճակատամարտ սկսած է, ազգին սէրն է որ կը մղէ... Սակաւապետութեան ու ժուժկալութեան դաս կուտայ հայութեան... Եթէ երբէք պարբերաբար կը մշտէ ոստիկանութիւնը որ աչքը չորս բանայ յեղափոխականներուն վրայ, ազգին համար ունեցած անհուն գորովն է... Այն մարդոցմէն է որոնք ազգին գլխուն սափրիչութիւն կը սորվին...

Աղեթափ վեղարաւորը, որուն սրտին մէջ որդերը ալ ծեռուկ ձգած են, ու կնամարդի Նուբեանը, աղուոր կը խորվեն իրենց միսը հայրենի աւերակներուն վրայ։ Կարծես շան կաթ ծծեր են։ Ատանկներուն դէմ Աստուած ձեռքը դէմ չբերեր կըսէ ժողովրդային բարեմըտութիւնը... Եօթը գլխէն դեռ չեն անշուշտ։

Սուլթանին համար անհրաժեշտ են այդ փաղիժները, հայութիւնը դեղելու ու մահացնելու համար. եթէ հայ-

կական գառնուկը առիւծ մը ծնած չըլլար սակայն...

* * *

Ռուսիոյ դեսպանը Դանէն պահանջեր է որ 40,000-ի չափ փախստական հայերը իրենց տուները տեղերը վերադառնալու ազատութիւն տրուի։ Դուռը չլսում կընէ և փախցունք կուտայ անհիմն պատրուակներով։ Իսկ վէզիրը առարկեր է թէ, հայերուն ինչքերը մահաճիրները գրաւած են արդէն։ Չենք կրնար ըմբռնել թէ որո՞ւ տեղ որո՞ւ կը տրուի։ Ինչպէս կերևի Թիւրքիան հայերու նկատմամբ՝ կանխամտածուած քաղաքականութիւն մը կը դանեցնէ... հայերը այլևս չիք են Թիւրքիոյ աչքին։ Դարերով հայուն արիւն քրտինքը ծծած հողերը աւազակներու կը բաշխուին. երբ անոնց տէրերը աշխարհի վրայ իրենց չոր հոգին շալկած անօթի ծարաւ կը մուրան կը գուրան. մարդկային ամէն արժանապատուութիւն ցնորք մը ըլլալով այլևս իրենց համար...

Ու դեռ պատրիարքը, քիչ մը ջնջուիր։ Հոգիի այդքան լղկածութիւն տարերևոյթ չէ պարտապանաց մարմնեղութեան մը մէջ։ Օրմանեան փուտ ելաւ և անոնցմէ է որոնք պատրիարքներու երամակին մէջ մտած ըլլալու սնափառութիւնը ունին միայն։ Հուժկու բնազդի մը պակասը ձայնագոռոչ պատրիարքին մէջ, ակներև է։ Ո՜ւր էր որ սիրտդ ալ ձայնիդ պէս որոտար... ով Օրմանեան...

Ալ հերիք է որքան լղճիր սուլթանի խարտոցը...

Եթէ պահանջումներուդ արդարութիւնը չարխափանի չափ ալ ազդեցութիւն չունի հրաժարէ կամ... մեռիր...

Դուռը զուր տեղը խաբխբութիւններով ազգին իրաւունքները մարսել կը նկրտի։ Գտեր կակալա պատրիարք կը խաղցնէ։ Ցեղափոխութիւնը կը համբերէ, կը համբերէ, կը ձևացնէ թէ ամէն հովի գլուխ կը ծռէ, բայց իր յուսախաբութիւններուն մէջ կը հասնի ինչպէս „փայլակն յարևելից“։

Ապիւլ Հիւտան այդ կէտը միայն չկրնար գուշակել գերահրաշ խալիֆային։

Ուրիշ կերպ հնար չկայ „սատանաներուն հետ շերեփով դգլելու է...

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼ

Օսմանեան պետութիւնը կազմող բոլոր ազգութիւնների յեղափոխականների համար պիտի պարզ լինի, որ ընդհանուրի միակ թշնամին՝ ներկայ կառավարութիւնը տապալելու համար, անհրաժեշտ է նրանց համախմբումը մի դրօշակի շուրջը։

Դաշնակցութիւնը հէնց առաջին օրերից քարոզել է այդ և աշխատել է իրականացնել նրան, թէև շատերի կողմից այդ միտքը համարւում էր ուտոպիա։ Նա ոչ մի առիթ բաց չէ թողել արծարծելու այդ խնդիրը ու հրաւէր կարդալու՝ համախմբուիլ, գործունէութեան մի ընդհանուր ծրագիր մշակել և համերաշխ, ձեռք ձեռքի տուած կուռել։ Տարաբախդաբար նա գրեթէ յաջողութիւն չէ ունեցել, ուստի և շարունակել է կուռել մենակ՝ յենուած իր սեփական ուժերի վրայ։

Ի՞նչ է պատճառը, ինչո՞ւ այդ միտքը հեշտութեամբ յաջողութիւն չգտաւ, թէև շատ պարզ, շատ տարրական ճշմարտութիւն է։ Որքան որ միտքը ինքը պարզ ու տարրական է, նոյնքան նրա խոչընդոտները բարդ են։ Հեշտ չէր ոչնչացնել դարերով արմատ բռնած փոխադարձ անվստահութիւնն ու պատմական պայմանների շնորհիւ առաջ եկած անտագոնիզմը. հեշտ չէր ոչնչացնել այդ ժողովուրդներին պատուաստած ատելութիւնը՝ որ գլխաւորապէս տիրող դասակարգերի աշխատանքի արդիւնքն է, որին մեծապէս նպաստում էր կրօնների ու ազգութիւնների խտրութիւնը։ Զմոռանանք յիշատակել և սուլթանի կառավարութեան մեքենայութիւնները, որով նա աշխատել է միշտ զատած ու անհաշտ պահել նրանց։ Հակաւոր էր կուռել այս բոլորի դէմ. իսկ այդ ժամանակի էր կարօտ։ Մենք յաւակնութիւն չունենք կարծելու, թէ այս բոլորը ոչնչացած է և ժողովուրդները մէկմէկու հասկանում են. ոչ։ Բայց մի քայլ է արուած, և հենց այդ քայլն է որ ունի իր նշանակութիւնը թէ քաղաքական և թէ հասարակական տեսակէտից. կարելի է ասել՝ կամուրջը շինուած է, որով կը կապուին ու յարաբերութիւն կը հաստատեն զատուած ու մինչև իսկ մէկմէկու ատող ազգութիւնները։ Այս քիչ բան չէ։ Այսօր այդ տարբեր ազգութիւններին պատկանող մտաւոր ուժերը սկսել են մօտենալու քայլեր անել՝ մէկմէկու ըմբռնելու, համերաշխութեամբ գործելու։ Սա առաջին քայլն է, և այնքան նշանաւոր, որ մեր մէջ յոյսեր է ծագեցնում տեսնել ոչ հեռու ապագայում մի ծրագրով և մի դրօշակի տակ գործելիս։ Եւ չենք կարծում, թէ պիտի յուսախաբուինք, ի նկատի ունենալով՝ որ կեանքը ինքը գնում է այդ պահանջը։ Այդ փոխադարձ ատելութեամբ վերաբերող ազգութիւնների, ինչէս օրինակ հայի ու թիւրքի, շահերը նոյնն են. այնպէս որ իրերի ընթացքը արդէն դրանց մօտեցնելու է, տալու է մի կազմ՝ ընդդէմ ներկայ տիրող պայմաններին. կեանքը ինքը արդէն երևան կը հանի որ՝ իսկական անտագոնիզմը գոյութիւն ունի ոչ թէ նոյնանման շահեր ունեցող ազգութիւնների մէջ, այլ ներկայ կառավարչական սիստեմի ու իրենց մէջ։ Սրա վրայ պիտի աւելացնել և այն մտաւոր հոսանքը, որ այսօր տիրում է քաղաքակրթուած աշխարհում, որին անխուսափելի կերպով ենթարկւում են բոլոր ազգութիւններին պատկանող ինտէլիգենցիան, մտքի ներկայացուցիչները։ Այդ հոսանքը քարոզում է ազգերի և առհասարակ աշխատաւոր հասարակութեան համերաշխութիւն և կռիւ ընդդէմ բռնակալների ու կեղեքողների։ Այդ հոսանքն է գլխաւորապէս ղեկավարող գաղափարը օսմանեան պետութեան պատկանող ազգութիւնների մտքի ներկայացուցիչների։ Խօսքերնիս յեղափոխականների մասին է։ Այս երկու իրական փակտորները մեզ առհաւատչեայ են, որ մենք յուսախաբ չենք լինիլ ուստի և հաւատով պիտի նայենք ապագային՝ ուժեղացնելով համերաշխութեան ձգտումը։

„Օսմանլիից“ յետոյ այսօր „Մէշվէրէթն“ է համերաշխ գործունէութեան հրաւէր կարդում, այն „Մէշվէրէթը“, որ մի քանի ամիսներ առաջ անտակտ կերպով յարձակւում էր հայերի, բոլգարների վրայ։ Մենք չենք պատասխանում այդ անտակտ յարձակումներին, քանի որ համոզուած ենք, որ վաղը դրանք պիտի զղջան, որովհետև ճշմարտութիւնը մեր կողմն է։ Համերաշխութեան կոչի ձայներ լսւում են և այլ կողմերից։ Այս

երեւոյթով մենք հրճւում ենք. ցանած սերմերը, որ կարծւում էր, ապառաժի վրայ էին ընկել, այսօր ծաղկում, ծլում են, նրանք վաղը կուրճանան եւ պտուղ կը տան, որից օգտւելու են հարկաւ սուլթանի լծի տակ հեծող ազգութիւնները անխտիր կերպով:

Դաշնակցութիւնը, քարոզելով ընդհանուր համերաշխութիւն, դրա կից քարոզել ու արծարծել է և մի այլ գաղափար, որ լրացնում, ամբողջացնում է առաջինին, նրան գոյն, կեանք է տալիս։ Քարոզելով որ՝ Օսմանեան պետութեան մէջ գտնւող բոլոր ազգութիւններին անհրաժեշտ է համախմբւել մի դրօշակի շուրջը, նա մատնացոյց է եղել և այդ դրօշակի վրայ, որ պիտի կապի, միացնի բոլորիս — այդ ֆէտէրատիվ, (դաշնակցական) ռամկավար կառավարչական կազմակերպութիւնն է ապակենտրօնացման սիստէմով։ Բոլոր ազգութիւնները, ինչ ցեղի ու կրօնի էլ պատկանելիս լինեն, վերոյիշեալ կառավարչական սիստէմի, ձևի մէջ կարող են կազմել մի պետութիւն՝ պահպանելով իւրաքանչիւրը իր անկախութիւնը, իր ինքնուրոյնութիւնը. միայն ֆէտէրատիվ կազմակերպութեան մէջ իւրաքանչիւր ազգութիւն կարող կը լինի բաւարարութիւն տալ իր իրաւացի պահանջներին։ Այդտեղ չկայ, և լինել էլ չի կարող, ոչ տիրող տարր և ո՛չ էլ հպատակւող, իւրաքանչիւր ազգութիւն կազմում է պետութեան մի մասը, այդ ազգութիւններին պատկանող իւրաքանչիւր անհատ պետութեան քաղաքացին է հաւասար քաղաքական ու քաղաքացիական իրաւունքներով։ Այդտեղ կը չքանան դարերով գոյութիւն ունեցող ազգային անտագօնիզմն ու կրօնական անհամբերողութիւնը, փոխադարձ ատելութիւնն ու հալածանքը, և կը տիրէ համերաշխութիւն ու սէր, խաղաղ, անդորր ու ապահով կեանք։ Այդտեղ ապահով կերպով ակօսներ կը փորէ աշխատասէր գիւղացու արօրը, և արհեստաւորի մուրճն ու զնդանը այլևս չեն կռիլ կոփիլ մարդկանց համար շղթայ. կեանքը եռ կը գայ, երկիրը կըսկսի ծաղկիլ, առևտուրն ու ինդուստրիան զարգանալ, արհեստը աճիլ, կրթութիւնը, ուսումը տարածւիլ, և կարճ ժամանակամիջոցում քայքայւած և աւերակ դարձած երկիրը կը կերպարանափոխւի, կը դառնայ մի չքնաղ աշխարհ. . . .

Ահա այս գաղափարի շուրջն է, որ մենք հրաւիրել ենք օսմանեան պետութեան պատկանող ազգերին համախմբւիլ, որովհետև դա է խոստանում ժողովուրդներին, աշխատաւոր հասարակութեան գարնանային օրեր, օրեր, որոնց վաղո՛ւց նա կարօտում է տապակւած սրտով։ Համախմբւենք, ձեռք ձեռքի տանք ու կռւենք մեր միակ իսկական ու ոխերիմ թշնամու դէմ, որ աւերակ է դարձրել հարուստ, չքնաղ երկիրը, թշւառացրել նրա ժողովուրդներին, ու հալածական անելով, սփռել երկրիս վրայ անտուն, անտէրունջ։ Կռւենք միացած, մի դրօշակի տակ, և յաղթութիւնը մերն է։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. ԿԵԴՐՕՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆ ստացած է.

Պետր. 700 ռուբլի, Ռոստ. 100 ռ., Ռսկմնապատ 3,000 ռ., Նմ. 300 ռ., Կօլխիդա 117 ռ., Նխ. 139 ռ., Նռանդ խումբ 45 ռ., Կանանց „Զաւէն" մասնաճիւղէն 100 ռ., Եգիպտացի խումբ 50 ռ., Պողպատէն 180 ռ., Սկնակ խումբ 11 ռ., Հոգեւոր աշակերտներից 5 ռ. 50 կոպէկ. Ճառից 150 ռ., Ակոսէն 22 ռ., Ռստ. 100 ռ.:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝

Ժընէվէն Օր. χ. 20 Ֆրանք, Լօնտօնէն (Քօմիտէի) Մարգ. 17 Ֆր. 60 սանթիմ, Մօնպէլիէէն՝ մի խումբ ուսանողներէ 43 Ֆր., Գերմանիայէն՝ Անյայտ պարոն 25 Ֆր., Մօլէկիւլ Կոմիտէէն 160 մարկ, Ցիւրիխէն „Ժանր" 7 Ֆրանք:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կոմիտէն՝

„Հուր Երկաթ քաղաքի Գերեզման խումբէն Մա՛արծրունի 32 դահեկան, Մուրճ 16 դհ., Մամիկոնեան 16 դհ., Գեր 8 դհ., Գեղամ 8 դհ.: Հրատ խումբէն՝ Հրատ 66 դհ., Աշըգ-Ղարիպ 26 դհ.: Մուշեղ խումբէն՝ Մուշեղ 16 ու կէս դհ., Երկշոտ 10 դհ., Սրոց 10 դհ., Նուպար 16 ու կէս դհ., Վարարան 14 դհ., Շաւարշ 33 դհ., Երկու պապառամներ 25 դհ.: Դամ խումբէն՝ Դամ 132 դհ., Ապալի 115 ու կէս դհ., Սեր 31 ու կէս դհ.: Խաթիլ խումբէն՝ 28 դհ., Հեվայի-զող 21 դհ.: Ժիրայր խումբէն՝ 86 դհ.: Նշոյլ խումբէն՝ Նշոյլ 66 դհ., Ծոր 156 դհ., Ազատ 1, 2, 3, 48 դհ. 10 փարա, Արծան 7 դհ., Տերեւ 33 դհ.: Տէրօյեան խումբէն 42 դհ.: Արշակ խումբէն՝ 17 ու կէս դհ.: Նոյն քաղաքի Քարաժայռ խումբի Լապտերներէն 2004 դհ. եւ 10 փ.:

Նոյն քաղաքէն Վ. Կ. Դամ 30 դահեկան, Կկոց 10 դհ., Լուսնթագ 10 դհ., Ասլան 5 դհ., Հրատ, Կրակ, Դպիր, Արեւ, Նեքղո, Ծով 10-ական դհ.:

Տ.-նէն 67 անգլիական ոսկի:

Շիշէճի 542 ու կէս դահեկան, Հեթրայ 10 ու կէս դհ., Պանտ 5 դհ., Կանգուն 5 դհ., Սուրճ 5 դհ., Դուրբինեաց խ. 19 դհ., Անդրանիկ խ. 13 դհ., Որոտում խ. 26 դհ., Արապօ խ. 32 դհ., Սեւ-Բերդէն՝ Ծաղիկ, Պարոյր, Զաւէն Դ., Երկու ասեղ, Դ. 40-ական դհ., Սուլիչ 30 դհ., Կրս. 20 դհ.:

Պղնձաքաղաքէն՝ Ազնիւ 60 դահեկան, Քաջալերող 33 դհ., Նըրբամիտ 26 դհ., Անկեղծ 17 ու կէս դհ., Ցորեն, Խոհական, Գարի, Նարինջ 14-ական դհ., Շոգի 8 դհ. 30 փ., Մեքենայ 8 դհ. 30 փ., Եռանդուն 7 դհ., Զիթենի 5 դհ.:

ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն՝

Կարմիր քաղաքէն՝ Լեւոն 50 ռուբլի, Կարմիր ծաղիկ 100 ռ., Պոնտոս 25 ռ., Բարեսիրտ 50 ռ., Աւետիս 5 ռ., Գարաչիչէք 20 ռ.:

Հուր քաղաքէն՝ Շիրինէ 13 ռուբլի:

ՊԱԼՔԱՆԵԱՆ Կ. Կոմիտէն՝

Ւ. քաղաքի Կոմիտէն Տ. Ըլիզի ձեռքով մարտէ-ապրիլ. Աստղիկ 3 Ֆրանք, Վարդ, Փայլակ, Լուիզ 6-ական Ֆր., Կայծ 9 Ֆր., Ծուր 9 Ֆր., Սահմանք 40 Ֆր.: Արծիւ 20 դահեկան, Ոսպ 10 դհ., Կամք 20 դկ.:

ՎԻՇԱՊԻ „Մահ" Կոմիտէն՝

Ազատասէր ոմն, Կամք, Արծիւ 20-ական ղուրուշ, Մօսին 18 ղր., Ոսպ 10 ղր., Դաւիթ պէկ, Եզեկիէլ 5-ական ղր.:

ՎՐԷԺ Կեդր. Կոմիտէն՝

„Վրէժ" քաղաքի „Միքրոք" խմբի „Աւետօ"-ի նւիրատւութիւնը: Ութ հոգի „ոմն" ստորագրողներից 127 ղռան, Ջ. Բ. 80 ղռ., Տ. Ա. Ա. 30 ղռ., Տիկ. Ս., Գ. Տ. Ց., Մարտիկ 20-ական ղռ., Մ., Տիկ. Ն., Տիկ. Մ., Ն. Ը., Ս. Մ., Տիկ. Վ. Ս., Եղ. Ա., Ն. Բ., Օր. Փ., Թ. Կ., Ուրսօ, Ա. Ղ. 10-ական ղռ., Տ. Մ. Ա., Ս. 5-ական ղռ., Կիրեկց. 4 ղռ., Ա. Տ. Ջ., Ց. Մ. Ե., Բազէ 2-ական ղռ., Ա. Տ. Ջ. 10 ղռ., Հ. Մ. 4 ղռ., Միս. Մ. 15 ղռ.: Համագումար 466 ղռան:

Նոյն խմբի վիճակախաղից 100 ղռան, Բացիլ խմբից 50 ղռ., Ամբօյի վիճակախաղից 56 ղռան:

Կ.-սից նահատակւած „Կարօ"-ի մօրից 5 ռուբլի, Արղաք-ի „Սէր" խմբից 140 ղռան, Շահրութից՝ Atant , Անդոր, Թոնդի 30-ական ղռ., Ալբէօց, Ոմն 25-ական ղռ., Ոմն, Անցորդ, Սուլթան, Մի հայ, Գէորգ, Ոմն, 10-ական ղռան, Սկայմ 90 ղռ., Ջամալ 20 ղռ., Ա. Ղորղ. 30 ղռ., Մշակ 30 ղռ.: Համագումար Շահրութի նւէրների 370 ղռան:

ՏԱՊԱՐ Կեդր. Կոմիտէն՝

Մայիս ամսւայ նւիրատւութիւնք.— Սուլիչ շրջ. 35 դահեկան, Ջրվէժ շրջ. 27 դհ., Գեղջուկ շրջ. 10 դհ., Շփոթ շրջ. 10 դհ., Պերճ շրջ. 10 դհ.:

ՎՐԻՊԱԿ.— Nr 4-ի մէջ տպւած է՝ Հ. Յ. Դ. Կեդր. սնտուկի մէջ, պէտք է լինի՝ Նաւահանգիստի Կոմիտէի սնտուկի մէջ:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)